*15.04.2013թ.*

# Պարզաբանում

Զանգվածային լրատվության միջոցներով տարածվել է Համահայկական երիտասարդական ընդվզում նախաձեռնության հաղորդագրությունը՝ Երևանի պետական մանկավարժական համալսարանի շենքի արտաքին պատին քարոզչական պաստառներ փակցնելու համար անվճար տեղի առանձնացման վերաբերյալ՝ համապատասխան տեսանյութով:

ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովը պարզաբանում է՝

ՀՀ ընտրական օրենսգրքի 20-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն. «Ընտրություններ նշանակվելուց հետո՝ 21-օրյա ժամկետում, համայնքի ղեկավարը պարտավոր է ընդունել որոշում համայնքի տարածքում քարոզչական պաստառներ փակցնելու համար անվճար տեղեր առանձնացնելու մասին՝ սահմանելով այնպիսի պայմաններ, որոնք թեկնածուների, համամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների համար կապահովեն հավասար հնարավորություններ (հավասար մակերես): Սույն լիազորությունը համայնքի ղեկավարի համար համարվում է պարտադիր լիազորություն:»:

Նշված վայրերը, այդ թվում՝ Երևանի պետական մանկավարժական համալսարանի շենքի արտաքին պատը, որոշված են Երևանի քաղաքապետի 05.03.2013թ. թիվ 923-Ա որոշմամբ: Հիշյալ որոշումը հանդիսանում է իրավաչափ վարչական ակտ. որևէ մեկի կողմից որոշման իրավաչափությունը վիճարկված չէ:

Ինչ վերաբերում է որոշմամբ սահմանված առանձնացված վայրի վերաբերյալ դատողություններին, ապա նշված վայրի, այսպես կոչված, անթույլատրելիության

վերաբերյալ ենթադրություններն սուբյեկտիվ են, կամայական, մերկապարանոց՝ չունենալով որևէ առնչություն իրավունքի հետ ընդհանրապես: Նշված վայրը որպես քարոզչական պաստառներ փակցնելու համար անվճար տեղ սահմանելը որևէ օրենքով կամ իրավական այլ ակտով արգելված չէ:

Նկատի ունենալով, որ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով, նախընտրական քարոզչության իրականացման համար օրենքով նախատեսված ժամանակահատվածում քարոզչական պաստառներ փակցնելու համար առանձնացված տեղերում փակցված քարոզչական պաստառները դիտավորյալ պոկելը, պատռելը կամ դրանց վրա գրառումներ կատարելը հանդիսանում է վարչական զանցանք և առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից մինչև հարյուրապատիկի չափով, ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովը հորդորում է զերծ մնալ պաստառները դիտավորյալ պոկելուց, պատռելուց կամ դրանց վրա գրառումներ կատարելուց:

Միաժամանակ տեղեկացնում ենք ընտրական գործընթացի բոլոր մասնակիցներին, որ կենտրոնական և ընտրատարածքային ընտրական հանձնաժողովները Երևանի քաղաքապետարանի հետ պարբերաբար կատարում են շրջայցեր, և օրենքի խախտմամբ փակցված փաստառներ հայտնաբերվելու դեպքում դրանք անմիջապես հեռացվում են: